

Որակի հոչակագիր Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ
0.2	Ոլորտը	Տրանսպորտ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին Բաժնի պետ Անահիտ Ներսիսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 582949 Էլ. փոստ՝ <a href="mailto:anahit_nersisyan@armstat.am">anahit_nersisyan@armstat.am</a> , <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության վերաբերյալ.</p> <p>1) ըստ նշանակության՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• միջպետական,</li> <li>• հանրապետական,</li> <li>• տեղական,</li> </ul> <p>2) ըստ տեսակների՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• կապիտալ,</li> <li>• թեթևացված,</li> <li>• անցողիկ,</li> </ul> <p>3) ըստ ծածկի տեսակների՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ասֆալտբետոնե,</li> <li>• ցեմենտբետոնե կամ երկաթբետոնե (միաձույլ կամ հավաքովի),</li> <li>• սալարկներ (կանոնավոր քարերից),</li> <li>• կապակցանյութերով մշակված խիճ, կոպիճ կամ ավազ:</li> </ul> <p>Ինչպես նաև տրամադրել տեղեկատվություն ճանապարհների արհեստական կառույցների (կամուրջներ, խողովակներ, թունելներ) քանակների և երկարությունների վերաբերյալ:</p> <p>Ցուցանիշների հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և</p>

		վարվում է 20-րդ դարի 70-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:  Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ցուցանիշները կիրառվում են տնտեսության տարբեր բնագավառներում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը մարզպետարաններից և «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ից տարեկան պարբերականությամբ հավաքվող տվյալներն են:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
<b>1 Բովանդակություն</b>		
1.1	Բովանդակության նկարագիրը	Ավտոմոբիլային ճանապարհը՝ համալիր ինժեներական կառույց է, որը նախատեսված է ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության համար: Ավտոմոբիլային ճանապարհների բաղադրիչներն են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները և ճանապարհների արհեստական կառույցները: Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկությունը թույլատրվում է առանց սահմանափակումների՝ տրանսպորտային միջոցների, հետիոտնի, սայլակներով տեղաշարժվող հաշմանդամների և հեծանվորդների համար՝ օրենքով սահմանված երթևեկամասերով: Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները (բացառությամբ

		<p>Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) գտնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (պետական ճանապարհային մարմին) տնօրինության ներքո:</p> <p>Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելն անվճար է:</p> <p>Ավտոմոբիլային ճանապարհը՝ համալիր ինժեներական կառույց է, որը նախատեսված է ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության համար:</p> <p>Ավտոմոբիլային ճանապարհների բաղադրիչներն են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները և ճանապարհների արհեստական կառույցները:</p> <p>Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկությունը թույլատրվում է առանց սահմանափակումների՝ տրանսպորտային միջոցների, հետիոտնի, սայլակներով տեղաշարժվող հաշմանդամների և հեծանվորդների համար՝ օրենքով սահմանված երթևեկամասերով:</p> <p>Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները (բացառությամբ Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) գտնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (պետական ճանապարհային մարմին) տնօրինության ներքո:</p> <p>Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելն անվճար է:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><i>Հիմնական հասկացություններ</i></p> <p>Հայաստանի Հանրապետության ճանապարհները՝ ըստ օգտագործման տեսակի դասակարգվում են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• ընդհանուր օգտագործման ճանապարհներ,</li> <li>• ոչ ընդհանուր օգտագործման ճանապարհներ:</li> </ul> <p>Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները՝ ըստ սեփականության ձևի դասակարգվում են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• պետական ավտոմոբիլային ճանապարհներ,</li> <li>• ոչ պետական ավտոմոբիլային ճանապարհներ:</li> </ul> <p>Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները՝ ըստ նշանակության դասակարգվում են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ (այդ թվում՝ համայնքների վարչական</li> </ul>

- սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներ),
- հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներ),
  - մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներ):

**Տարանցիկ ճանապարհը** քաղա անվանացանկում ընդգրկված ճանապարհի մաս է, որը կապում է քաղաքի (բնակավայրի) վարչական սահմանի երկու կետերը:

**Միջպետական նշանակության** ավտոմոբիլային են համարվում այն ճանապարհները, որոնք կապում են Հայաստանի Հանրապետության ճանապարհային ցանցն այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին, և ապահովում են միջազգային տրանսպորտային հաղորդակցությունը:

**Հանրապետական նշանակության** ավտոմոբիլային են համարվում այն ճանապարհները, որոնք կապում են հանրապետության քաղաքները մայրաքաղաքի և միմյանց, մշակութային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ:

**Մարզային (տեղական) նշանակության** ավտոմոբիլային են համարվում այն ճանապարհները, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ:

**Ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները** ֆիզիկական ու իրավաբանական անձանց սեփականությունն են և օգտագործվում են դրանց ներտնտեսական, տեխնոլոգիական, ծառայողական, անձնական, պարեկային և այլ կարիքների համար, և այդ ճանապարհներով երթևեկել կարող են միայն տնօրինողի թույլատրած տրանսպորտային միջոցներով: Այդ ճանապարհներից օգտվելու իրավունքը և սահմանափակումները սահմանում են դրանց սեփականատերերը:

Ճանապարհներն ըստ պատվածքի տեսակների դասակարգվում են՝ կապիտալ, թեթևացված և անցողիկ ճանապարհների: քի (բնակավայրի) միջով անցնող ավտոմոբիլային ճանապարհի Կապիտալն իր մեջ ներառում է ասֆալտբետոն, ցեմենտբետոն կամ երկաթբետոն (միաձույլ կամ հավաքովի) ծածկի հիմնական տիպերը՝ I-III ճանապարհի կարգերով:

		<p><b>Թերևացված</b> ճանապարհային պատվածքն իր մեջ ներառում է ծածկի հետևյալ տիպերը՝ ասֆալտբետոն, սալարկներ (կանոնավոր քարերից), որոնք օգտագործվում են III, IV և II երկփուլ շինարարության առաջին փուլում, ինչպես նաև իր մեջ ներառում է կապակցանյութերով մշակված խիճ, կոպիճ կամ ավազ՝ III և IV ճանապարհի կարգերով:</p> <p><b>Անցողիկն</b> իր մեջ ներառում է ծածկի հետևյալ տիպերը՝ խիճ, կոպիճ, կապակցանյութերով մշակված գրունտներ ու տեղական ոչ ամուր քարային նյութեր, ինչպես նաև սալարկներ (գետաքարերից ու ճեղքած քարերից), որոնք օգտագործվում են IV և III երկփուլ շինարարության առաջին փուլում:</p> <p><b>Ճանապարհային պատվածքները</b> կարող են բաղկացած լինել մեկ կամ մի քանի շերտերից: Բազմաշերտ պատվածքները բաղկացած են ծածկից, հիմքից և հիմքի լրացուցիչ շերտից՝ ցրտապաշտպան, ջերմամեկուսիչ, ցամաքեցնող ու հարթեցնող:</p> <p><b>Ճանապարհների արհեստական կառույցները</b>՝ ավտոմոբիլային ճանապարհների այն մասերն են (կամուրջներ, խողովակներ, թունելներ), որոնք ճանապարհի հողային պաստառը դարձնում են անընդհատ՝ բնական և արհեստական խոչընդոտների վրայով կամ միջով, ինչպես նաև ապահովում են ճանապարհի ամրությունն ու երթևեկության անվտանգությունը:</p> <p><i>Աշխարհագրական ընդգրկունություն</i></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը:</p> <p><i>Հրապարակման խմբավորումներ</i></p> <p>Տվյալները հրապարակվում են ըստ սեփականության ձևի, օգտագործման նշանակության և ծածկույթի տեսակների:</p>
--	--	---

2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տարեկան ցուցանիշները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 4-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան
3 .Ճշգրտություն		

3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում: Հետազոտությունը հիմնված է մարզպետարանների և «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի համատարած դիտարկումների վրա:
3.2	Անճշտության աղբյուրները	Անճշտության աղբյուր առկա չէ:  Սահմանված ժամկետում վիճակագրական տվյալների չներկայացման դեպքում կրկնվում են նախորդ ժամանակաշրջանի տվյալները:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ներկայացված տվյալների ճշգրտությունն իրականացվում է նախորդ տարի տվյալ ժամանակահատվածի համար ներկայացված համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով:
<b>4 .Համադրելիություն</b>		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Տվյալները ժամանակագրական առումով համադրելի են:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության հետ համադրելիություն առկա չէ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հրապարակված տվյալները համարվում են վերջնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են համապատասխան ճշգրտումներով և բացատրական ծանոթագրություններով:
<b>5 .Մատչելիություն</b>		
5.1	Տարածման ձևաչափ	<b>Տարեկան հրապարակումներ</b>  «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):  <b>Տվյալների բազաներ</b>  <a href="http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</a>  <b>Ինտերնետային հասցե</b> Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. <a href="http://www.armstat.am/am/?nid=82">http://www.armstat.am/am/?nid=82</a> :
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Այլ տեղեկատվություն	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=373">https://www.armstat.am/am/?nid=373</a> :

5.4	Այլ տեղեկատվություն	Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնական ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2019թ. փետրվարի 19-ի ««Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և դրանց կառույցների մասին» Ձև 1-ճան (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 05-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ում:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: